Հաշվետվություն

2024 թվականի հոկտեմբերի 9-ից 11-ը Ղազախստանի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Արամ Գուգարաց, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ,
   Լևոն Պողոսյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի խորհրդական
   Արմեն Գրիգորյան, Կադաստրի կոմիտեի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ալմաթի, հոկտեմբերի 9-ից 11-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարության և օդատիեզերական արդյունաբերության նախարարության գեոդեզիայի և քարտեզագրության կոմիտե:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XLVI նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

Նիստերի օրակարգն ընդգրկում էր հետևյալ հիմնական թեմաները.

- ✓ ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XLV նստաշրջանում ընդունված որոշումների կատարումը, ինչպես նաև նախորդ նստաշրջանից հետո ԱՊՀ մասնակից պետությունների քարտեզագրական և գեոդեզիական ծառայությունների իրականացրած գործունեությանը վերաբերող հարցեր,
- ✓ Երկրատարածական տվյալների և ծառայությունների կիրառման առանձնահատկությունները,
- ✓ Հերթական նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում Քարտուղարության և միջպետական խորհրդի աշխատանքային խմբերի գործունեության արդյունքները,
- ✓ Մոսկվայի գեոդեզիայի և քարտեզագրության պետական համալսարանի (МИИГАиК)՝ որպես գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի

հեռահար զոնդավորման բնագավառում կադրերի պատրաստման համար ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության գործունեության արդյունքները,

- ✓ Գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, տարածական տվյալների և երկրատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների բազային գիտատեխնիկական կազմակերպության («Ռոսկադաստր» հանրային-իրավական ընկերություն) գործունեության արդյունքները,
- ✓ Գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, երկրատարածական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային հաշվառման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների միջև մինչև 2026թ. համագործակցության միջպետական ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվության համաձայնեցումը,
- ✓ Գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, երկրատարածական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային հաշվառման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների միջև մինչև 2026թ. համագործակցության միջպետական ծրագրի օպերատորի կանոնադրության հաստատման վերաբերյալ հարցեր,
- ✓ Գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, երկրատարածական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային հաշվառման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների միջև մինչև 2026թ. համագործակցության միջպետական ծրագրի կատարման միջոցառումների պլանի հաստատման հարցը,
- ✓ ԱՊՀ տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալի էլեկտրոնային ծառայությունների գործարկման ապահովման նպատակով բաց օգտագործման բազային և թեմատիկ տարածական տվյալների հավաքածուները հաստատելու հարցը,
- ✓ «ԱՊՀ մասնակից պետությունների տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպարտալ» տեղեկատվական համակարգի կանոնադրության հաստատման հարցը,
- ✓ Միջպետական խորհրդի հաջորդ նախագահողի ընտրության, Միջպետական խորհրդի XLVI նստաշրջանի ամսաթվի և անցկացման վայրի վերաբերյալ հարցերը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառման մասնակիցներին ներկայացվեցին Միջպետական խորհրդի նախորդ նստաշրջանին հաջորդող ժամանակահատվածում Կադաստրի կոմիտեի կողմից իրականացված միջոցառումները: Զուգահեռ ընթացող աշխատանքային խմբերի նիստերում քննարկվեցին էլեկտրոնային ծառայությունների գործարկման ապահովման նպատակով բաց օգտագործման բազային և թեմատիկ տարածական տվյալների հավաքածուները, մոդելները հաստատելու և այլ կարևոր հարցեր: Տարածական տվյալների ենթակառուցվածքի աշխատանքային խմբի նիստի ընթացքում ներկայացվեցին տվյալների հավաքածուները հաստատելու վերաբերյալ հայկական կողմի առաջարկները, օրակարգային հարցերին վերաբերող փաստաթղթերում կատարվեցին խմբագրումներ, սահմանվեց հավանության արժանացած բազային և թեմատիկ տվյալների ցանկը հետագայում փոփոխելու հնարավորություն: Միջպետական խորհրդի անդամ պետությունների պատվիրակությունների ներկայացուցիչների, Միջպետական խորհրդի քարտուղարության, «Ռոսկադաստր» հանրային-իրավական ընկերության, Մոսկվայի գեոդեզիայի և քարտեզագրության պետական համալսարանի (МИИГАиК) ներկայացուցիչների մասնակցությամբ ընթացող նիստի շրջանակում քննարկվեցին համապատասխան ոլորտներում կատարված աշխատանքների ընթացքը, նախանշված միջոցառումների իրականացմանը վերաբերող հարցեր: Հայկական կողմի առաջարկությամբ փոփոխվեցին օրակարգային հարցերին առնչվող փաստաթղթերի նախագծերում առկա որոշակի դրույթներ և ձևակերպումներ: Մասնավորապես Գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, երկրատարածական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային հաշվառման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների միջև մինչև 2026 թ. համագործակցության միջպետական ծրագրի օպերատորի կանոնադրության և տարածական տվյալների ենթակառուցվածքի «գեոպառտալ» տեղեկատվական համակարգի կանոնադրության նախագծերում վերաձևակերպվեցին կամ հանվեցին մասնակից պետությունների ներքին իրավական ակտերում փոփոխությունների իրականացում ենթադրող ձևակերպումները: Վերստին ընդգծվեց միջպետական խորհրդի կողմից նախաձեռնվող ծրագրերի, իրականացվող միջոցառումների մշակման փուլում անդամ պետությունների օրենսդրական կարգավորումները հաշվի առնելու, ներպետական իրավական ակտերում նոր փոփոխություններ նախատեսող դրույթների շուրջ քննարկումներ ծավալելու և փոխհամաձայնեցնելու անհրաժեշտությունը: Պատվիրակությունների անդամների հետ շփումների, առանձնազրույցների ընթացքում քննարկվեց երկկողմ և բազմակողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Որոշվեց ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի հաջորդ՝ XLVll նստաշրջանն անցկացնել Ղրղզական Հանրապետությունում: XLVI նստաշրջանի արձանագրությունը հայկական կողմը ստորագրեց վերապահումով (արձանագրությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը իր ազգային օրենսդրության համապատասխան մասնակցելու և արձանագրության յուրաքանչյուր կետի իրականացմանը մասնակցություն ապահովելու մասով առանձին որոշում կայացնելու վերաբերյալ):

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ղազախստանի Հանրապետության գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ քննարկվեցին համապատասխան ուղղություններով երկկողմ համագործակցության ընդլայնման, առաջավոր փորձի փոխանակմանն առնչվող հարցեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվացնելու մասնակից պետությունների միջև միջգերատեսչական շփումները, համապատասխան ոլորտները ներկայացնող մասնագետների մասնակցությամբ առավել հաճախակի կազմակերպել առցանց միջոցառումներ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Արամ Գուգարաց
Լևոն Պողոսյան
Արմեն Գրիգորյան

15.10.2024 թ.